ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Լոռի Բերդ « 08 » դեկտեմբերի 2023թ.

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն  ԹԻՎ 13

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Կայացավ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագնու 2023թ. երրորդ նստաշրջանի՝ դեկտեմբերի 08-ին հրավիրված հերթական նիստը:

Նիստին ներկա էին Լոռի Բերդ համայնքի ավագանու ինը անդամները, բացակա էին՝ Վահրամ Պապիկյանը, Կարլեն Վերմիշյանը, Վանո Ջատինյանը, Աննա Գրիգորյանը, Արթուր Ջատինյանը և Աննա Ասրյանը:

Նիստը վարեց՝ Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝ Արայիկ Ներսիսյանը:

Նիստը արձանագրեց՝ Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Անի Մարտիրոսյանը:

Համայնքի ղեկավար Ա. Ներսիսյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որտեղ տեղ էին գտել հետևյալ հարցերը.

Լսեցին՝

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Արայիկ Ներսիսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով և 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

ավագանին որոշեց՝ հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2023թ. երրորդ նստաշրջանի հերթական նիստի՝ դեկտեմբերի 08-ի նիստի օրակարգը՝ համաձայն ստորև ներկայացված տեսքի.

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2023 թվականի երրորդ նստաշրջանի հերթական նիստի՝ դեկտեմբերի 08-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

համայնքապետարանի աշխատակազմի քաղաքական,

2) ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

3) Հայաստանի Հանրապետության Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

4) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները սահմանելու մասին:

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2023 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

6) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 0-10 տարեկան երեխաներին Ամանորի կապակցությամբ նվերներ տրամադրելու մասին:

7) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2024-2026թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

8) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին:

**9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Ա/

**Լսեցին՝**

**ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի ԹԻՎ 50-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Զեկ. /Մարգարիտա Հովսեփյան/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետի մեկ պաշտոն անվանացանկում ավելացնելու առաջարկությունը.

**ավագանին որոշեց՝**

1. հաստատել՝ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Լոռի Բերդ համայնքի ղեկավարին՝ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին Լոռի Բերդ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություն կատարելու առաջարկությամբ:

3. Ուժը կորցրած ճանաչել 2022թ. փետրվարի 12-ի «Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 50-Ա որոշումը:

4. Սույն որոշումը ուժի մեջ է 2024 թվականի հունվարի 01-ից:

5. Սույն որոշումը համայնքային ծառայության անվանացանկի փոփոխության մասով ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություն կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

**9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71-Ա/

**Լսեցին՝**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12.12.2022Թ. ԹԻՎ 56-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Զեկ. /Մարգարիտա Հովսեփյան/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**ավագանին որոշեց՝**

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության

աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն՝ հավելվածի:

**2.** Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի մասին» Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 12-ի թիվ 56-Ա որոշումը:

**9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72-Ա/

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Լսեցին՝**

Զեկ. /Մարգարիտա Հովսեփյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով և 83-րդ հոդվածի 2-րդ կետով՝

**ավագանին որոշեց՝** ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2023 թվականի բյուջեում կատարել ստորև ներկայացված փոփոխությունները.

| Յամայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման | հոդված | վարչական բյուջե | | |
|---|---|---|---|---|
| | | հաստատված բյուջեով | նախատեսված | փոփոխութ |
| **Կառավարման ապարատ 01-01-01** | | | | |
| -Աշխատ. աշխատավարձեր և հավելավճ. | 4111 | 83 622,00 | 78 622,00 | -5 000,00 |
| -Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր | 4211 | 100,00 | 50,00 | -50,00 |
| -Էներգետիկ ծառայություններ | 4212 | 8 000,00 | 6 500,00 | -1 500,00 |
| -Ապահովագրական ծախսեր | 4215 | 150,00 | 100,00 | -50,00 |
| -Ներքին գործուղումներ | 4221 | 400,00 | 300,00 | -100,00 |
| -Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր | 4222 | 500,00 | 200,00 | -300,00 |
| -Աշխատակազմի մասնագ. զարգացման ծառայություններ | 4233 | 500,00 | 50,00 | -450,00 |
| -Ընդհանուր բնույթի այլ ծառայ. | 4239 | 200,00 | 0,00 | -200,00 |
| -Մասնագիտական ծառայ. | 4241 | 900,00 | 500,00 | -400,00 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| -Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267 | 1 000,00 | 1 150,00 | 150,00 |
| -Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 1 500,00 | 1 350,00 | -150,00 |
| **Ընդհանուր բնույթի հանր.ծառ. Այլ դասերին չպատկանող 01-06-01** | | | | |
| -Տրանսպորտային նյութեր | 4264 | 7 000,00 | 4 010,00 | -2 990,00 |
| -Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267 | 500,00 | 0,00 | -500,00 |
| Կապիտալ դրամաշնորհ | 4657 | 2 000,00 | 0,00 | -2 000,00 |
| **Գյուղատնտեսություն 04-02-01** | | | | |
| -Աշխատողների աշխատավ.և հավելավճարներ | 4111 | 100,00 | 10,00 | -90,00 |
| -Տրանսպորտային նյութեր | 4264 | 20 000,00 | 11 000,00 | -9 000,00 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | -22 630,00 |

| եկամտատեսակ | վարչական բյուջե | | |
|---|---|---|---|
| | հաստատված բյուջետով | նախատեսված | փոփոխութ |
| հողի հարկ | 5 000,0 | 4 000,0 | -1 000,0 |
| անշարժ գույքի հարկ | 33 000,0 | 31 960,0 | -1 040,0 |
| փոխադրամիջոցների գույքահարկ | 28 300,0 | 26 300,0 | -2 000,0 |
| հողի վարձակ. | 13 776,0 | 11 776,0 | -2 000,0 |
| ջրմուղ-կոյուղի | 5 000,0 | 2 000,0 | -3 000,0 |
| ինքնակամ շենքերի, շինությ. օրինականաց.համար վճար | 800,0 | 300,0 | -500,0 |
| այլ եկամուտներ | 183 968,9 | 170 878,9 | -13 090,0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | -22 630,0 |

**<u>9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:</u>**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73-Ն/

**<u>Լսեցին՝</u>**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 63-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Զեկ. /Մարգարիտա Հովսեփյան/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1 հոդվածով, ինչպես նաև «Նորմատիվ

իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ավագանին որոշեց՝** հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2024-2026թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը համաձայն՝ հավելվածի:

**2.** Ուժը կորցրած ճանաչել՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2024-2026թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2023թ. հոկտեմբերի 12-ի թիվ 63-Ն որոշումը:

**9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74-Ն/

**Լսեցին՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 0-10 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԱՄԱՆՈՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆՎԵՐՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Զեկ. /Մարգարիտա Հովսեփյան/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, ինչպես նաև հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**ավագանին որոշեց՝** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 0-10 տարեկան երեխաների համար Ամանորյա նվերներ գնելու կապակցությամբ Լոռի Բերդ համայնքի 2023թ. բյուջեի «Այլ մշակույթային կազմակերպություններ» ծրագրի 08 բաժնի 02 խմբի 04 դասի 4269 հոդվածով նախատեսված գումարից տրամադրել 1.000.000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

**9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75-Ա/

**Լսեցին՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Զեկ. /Անի Մարտիրոսյան/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի և «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝

**ավագանին որոշեց՝** սահմանել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքում սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

**9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 76-Լ/

**Լսեցին՝**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Զեկ. /Անի Մարտիրոսյան/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝

**ավագանին որոշեց՝** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանել՝ 2023 թվականի դեկտեմբերի 27-ը, ժամը՝ 12:00-ն:

**9 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 77-Ա/

Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Մարգարիտա Հովսեփյանը ներկայացրեց 2023թ. վճարված սոցիալական օգնությունների և դրամական մրցանակների մասին հաղորդում՝ 10.11.2023-08.12.2023 ժամանակահատվածի դրությամբ և 2023թ. տարեսկզբից.

2023թ վճարված սոց վճարների և դրամական մրցանակների մասին հաղորդում

| Սոց. վճարի տեսակը | 10.11.2023 - 08.12.2023 | | 2023թ. տարեսկզբից | |
|---|---|---|---|---|
| | Սոց. Վճար ստացած անձանց քանակը | Գումարը /հազ.դրամ/ | Սոց. Վճար ստացած անձանց քանակը | Գումարը /հազ.դրամ/ |
| Երեխայի ծննդյան կապակցությամբ | 12 | 390,0 | 58 | 1 940,0 |
| հուղարկավորության կազմակերպման համար | 5 | 200,0 | 57 | 2 240,0 |
| սոցիալական հատուկ արտոնություններ, այդ թվում | 0 | 0,0 | 196 | 3 440,0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| նորակոչիկ զինվորի երդման արարողությանը մասնակցելու համար | | | 21 | 840,0 |
| Հավաքների մասնակցության համար | | | 61 | 1 220,0 |
| վերջին զանգ | | | 49 | 490,0 |
| այլ | | | 5 | 200,0 |
| մայիսի 9-ի կապակցութ | | | 1 | 100,0 |
| առաջին դասարանցիներին | | | 59 | 590,0 |
| Ընդամենը սոց վճար | 17 | 590,0 | 311,0 | 7 620,0 |
| Այլ մշակութային կազմակերպություններ նախահաշվով վճարված դրամական մրցանակներ | | | 7 | 280,0 |
| Գերազանցիկներին | 76 | 760,0 | 76 | 760,0 |

***<u>Նիստի փակում</u>***:

Ավագանու անդամներ՝

Ներսիսյան Արայիկ Մենժիկի

Վարդումյան Հայկ Վազգենի

Շահնազարյան Թամարա Էդիկի

Պալյան Հարություն Միշիկի

Ներսեսյան Իրինա Վազգենի

Չիբուխչյան Արման Հրաչիկի

Մարգարյան Սիլվա Ստեփանի

Սիմոնյան Անահիտ Բաբկենի

Սեդրաքյան Անի Սամվելի

*Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝*

ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ ____________

*Նիստը արձանագրեց*՝ Անի Մարտիրոսյանը ____________

Կ.տ.